ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաշտոցյան Մատենադարանի երկարամյա աշխատող ու վաստակաշատ Աստղիկ Գևորգյանի աշխատասիրությամբ լույս է տեսել «Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն» խորագրով գիրքը, որը հեղինակի շուրջ 50 տարիների տքնաջան ու համառ աշխատանքի արդյունքն է: Հեղինակն ուսումնասիրել է աշխարհի տարբեր ձեռագրատներում, գրադարաններում և մասնավոր հավաքածուներում պահվող ձեռագրերի մանրանկարներն ու հիշատակարանները, մեղվի ջանասիրությամբ մեկ առ մեկ փնտրել-գտել է մանրանկարիչների անունները, ճշտել դրանց ապրած ու ստեղծագործած ժամանակաշրջանն ու վայրը, իրար մոտ բերել նույն մանրանկարիչների ծաղկած ձեռագրերը՝ կորստից փրկելով շատ ու շատ մանրանկարիչների վաստակը: 40 մամուլանոց մի գործ հրապարակ իջեցնելու համար, ինքնըստինքյան հասկանալի է, պետք էր ունենալ համբերություն, նվիրվածություն, համառություն, գործիմացություն. հատկություններ, որոնցով Ա. Գևորգյանին, փա՜ռք Աստուծո, բնությունը այնքան շռայլորեն օժտել է: Այս իմաստով Աստղիկ Գևորգյանը երջանիկ է: Գործը հնարավորին չափ կատարյալ դարձնելու համար Ա. Գևորգյանը կարդացել կամ թերթել է շուրջ 3000 մատյան ու գիրք, գրանցել շուրջ 470 անուն մանրանկարիչ, նշել նրանց ծաղկած մատյանների հասցեները, ժամանակաշրջանը, դպրոցը, ծաղկողի նկարազարդած ձեռագրերի քանակն ու էջերը, ըստ անհրաժեշտության նմուշներ բերել այդ մանրանկարներից: Այս իմաստով Ա. Գևորգյանի «Հայ մանրանկարիչներ» գիրքը ավելի ճիշտ կլիներ անվանել հայ մանրանկարչության հանրագիտարան, քան մատենագիտություն. այս հատորին հաջորդելու է երկրորդ հատորը, որն ամբողջությամբ նվիրվել է այս անգամ անանուն ծաղկողներին՝ նրանց, որոնք իրենց անունները չեն դրոշմվել հիշատակարաններում: Այս երկրորդ հատորը ծանրակշիռ խոսք պիտի ասի «անանուն» կոչված ծաղկողների անունները բացահայտելու, նրանց ծաղկած ձեռագրերը մեկ հարկի տակ բերելու, ձեռագրերի գրչության ու ծաղկման ժամանակը որոշելու, այս կամ այն դպրոցին պատկանելու հարցերը լուծելու գործում:

«Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն» գիրքը հեղինակի գիտական լուրջ նվաճումներից է: Արժանին պիտի մատուցել նաև Գերշ. Տ. Ծահեռ արքեպիսկոպոս Աճեմյանին ու «ՀԲԸՄ Կահիրեի մասնաճյուղի «Սաթենիկ Մ. Զազրը հիմնադրամ»» հաստատությանը, որոնց միջնորդությամբ ու ջանքերով լույս է ընծայվել դասական նման մի գործ: